

ղոպտեաց զգարդ Սրբոյ Տաճարիս, մաշելով զնոսա ի հուր եւ ի սուր. որ ուտեր եւ մանրեր եւ զմնացեալսն առ ոտան հարկանէր՝ ըստ տեսեանն Գանիէի:՝ Մերկացեալսն ի շնորհաց՝ մերկացոյց զհուկուհի հարսն սուրբ յամենից զարդուց: Օձալեզու պիղծն՝ որքան բաւեաց՝ բարուրս կուտեաց ի վերայ բարեկրօն միաբանից: Լցեալսն ամենայն չարեօք՝ զայս բարբառ արձակէր առ ամենեօին թէ զի՛նչ որ աւել՝ կամ աւել՝՝ օր իւրի: Բնաին: Այս նոր հրեայս եւ հին հեթանոս՝ եմուտ ի Տաճարն Աստուծոյ եւ եհեղ շուրջ զնսվաւ զարիւն ժահահոտ ի բերանոյ իւրմէ:

Գոյին ընդ նմա եւ արբանեակք իւրապիտիք, որք ոչ Սասունոծոյ երկնչէին եւ ոչ ի մարդկանէ ամաշէին. որք ի վերայ հին չարութեանց իւրեանց, զոր անցուցին ընդ Սուրբ Տունն, սմա եւս եղեն նպաստք չարութեան եւ աղուխաբարոյութեամբ պատրէին զպարզամիտ ազգս մեր:²

Ուստի տեսեալ խեղճ եւ ողորմելի միաբանից թէ ի քակտիլ առեալ է ի հիմանէ Սուրբ Տունն ի

1 Այնպիսի խժդժութիւններ ըրաւ Պալքէսէրցին Յովհաննէս որ կոչուին սիրաք խորունկ ցաւեցաւ. իր աչքով իսկ տեսաւ Ս. Փրկիչ վաճառման ծրագիրը: Ապուշեցի Սահակ պատրիարքին հրաժարման հետեւանքով (1714—1715), երբ Գանձակեցի Յովհաննէսը պատրիարք եղաւ Պալքէսէրցին նորէն զրկեց. սա երեք չորս ընկերներով, «արք ժանկոտեալք հնազոյն ամբարշտութեամբ եւ նեխեալք վաղեմական յիսկալութեամբ» վրէժ լուծեցին Ս. Յակոբէն. Ս. Փրկիչ վանքը վաճառելու որոշումը տուին: կոչուտ «բաշլաւնջ եւ արիական հովիւս», պարտքերուն երաշխաւոր եղաւ չորս տարւան համար, պաշտօնապէս պատուեցաւ կառավարութեան (Խէլայուեցաւ), հասարակաց կնիքը փշուռեցաւ եւ Աթոռը շունչ առաւ:

Հաննէ, ինչպէս վերագոյն ալ դիտել տուինք, կոչուտի հետ միեւնոյն բացատրութիւններով կը նկարագրէ իրաց վիճակը (Հմմտ. Հաննէ էջ 114—115):

2 Հաննէ էջ 114: